Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկում (Ալավերդու համայնքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ փողոց, 8/1, 4-րդ հարկ, նիստերի դահլիճ) ‹‹4›› սեպտեմբերի 2023թ. ժամը 11:00-ին տեղի կունենա համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդ – վաճառք՝ 5 լոտով:

Վաճառվում է՝

Լոտ 1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Թումանյան փողոց, 70/3 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0796-0013 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.00297 հա մակերեսով հողամասը 200000 դրամ մեկնարկային գնով՝ հասարակական օբյեկտ կառուցելու համար:

Լոտ 2. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս 2/34 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0061-0182 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 0.0035 հեկտար մակերեսով հողամասը 105000 դրամ մեկնարկային գնով՝ բնակելի կառուցապատում իրականացնելու համար:

Լոտ 3. Համայնք Ալավերդի, քաղաք Ախթալա, Թումանյան փողոց, 2-րդ փակուղի, 5 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-003-0016-0038 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 0.0054 հեկտար մակերեսով հողամասը 100000 դրամ մեկնարկային գնով՝ բնակելի կառուցապատում իրականացնելու համար:

Լոտ 4. Համայնք Ալավերդի, գյուղ Օձուն, 5-րդ փողոց, 71/10 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0460-0044 ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, 0.07238 հեկտար մակերեսով հողամասը 400000 դրամ մեկնարկային գնով՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտ կառուցելու համար:

Լոտ 5. Համայնք Ալավերդի, Օձուն գյուղ, 5-րդ փողոց, 71/11 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0460-0045 ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, 0.056 հեկտար մակերեսով հողամասը 300000 դրամ մեկնարկային գնով՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտ կառուցելու նպատակով:

Աճուրդի մասնակցության վճարը սահմանված է 15000 դրամ, աճուրդի քայլի չափը՝ մեկնարկային գնի 5%:

Կառուցապատվող հողամասերի համար աճուրդի հաղթողին տրամադրվում է ճարտարապետահատակագծային առաջադրանք:

Հողամասերի նկատմամբ սահմանափակումներ չկան:

Հողամասերի հարևանությամբ գոյություն ունեն ավտոճանապարհներ, ջրատարներ, կոյուղիներ, էլեկտրահաղորդման գծեր և գազատարներ:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2023թ. օգոստոսի 30-ը, ժամը 17:00-ն, հայտերի ընդունման հասցեն է՝ ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ փողոց, 8/1, 4-րդ հարկ, 410 սենյակ:

Աճուրդի պայմանների մանրամասներին՝ հողամասի ելակետային տվյալներին, ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջներին և պայմաններին, հողամասի հատակագծին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Ալավերդու համայնքապետարան, (ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1, հեռ.՝ /0253/2-41-00):

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱՋՅԱՆ